№ 82 ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 23

1904

ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 23 № 82

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Օլգա Ստանիսլավովնա Փիթօևա եւ Մարգարիտա Իսաևնա Բելեցկայա յայտնում են ազգականներին և ծանօթներին, Թանգագին ամուսնու և հօր՝

ԻՍԱՅ ԵԳՕՐՕՎԻՉ ՓԻԹՕԵՎԻ

մահվան մասին, որ տեղի ունեցաւ ներկայ ապրիլի 22-ին: Ամբիծքներ կը լինեն ուրբաթ, ապրիլի 23-ին և շաբաթ, ապրիլի 24-ին, երեկոյեան 7 ժամին: Մարմնի յուղարկաւորութիւնը կը լինի կիրակի, ապրիլի 25-ին, առաւօտեան 10 ժամին սեփական տնից դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին, իսկ այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը: 1—3

Նինա Եգօրովնա Տէր-Մկրտչեանց, Ալեքսանդր, Կօնստանտին եւ Իվան Եգօրովիչ Փիթօևներ երեխաներով տեղեկացնում են իրանց Թանգագին եղբօր և հօրեղբօր՝

ԻՍԱՅ ԵԳՕՐՕՎԻՉ ՓԻԹՕԵՎԻ

մահվան մասին: 1—3

«Իսայ Եգօրովիչ Փիթօեվ և Ընկ.» ֆիրմայի առևտրական տան ընկերակիցները վշտակցութեամբ տեղեկացնում են անգին ընկեր և ֆիրմայի գլուխ՝

ԻՍԱՅ ԵԳՕՐՕՎԻՉ ՓԻԹՕԵՎԻ

մահվան մասին: 1—3

«Իսայ Եգօրովիչ Փիթօեվ և Ընկ.» առևտրական տան ֆիրմայի գլուխ՝

ԻՍԱՅ ԵԳՕՐՕՎԻՉ ՓԻԹՕԵՎԻ

մահվան առիթով առևտրական տան գլխաւոր գրասենեակը Թիֆլիսում փակված կը լինի մինչեւ երեքշաբթի, ներկայ ապրիլի 27-ը: 1—4

Հայոց Դրամատիքական Ընկերութեան Վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն հասարակութեան, որ Ընկերութեան հիմնադիր անդամ և Վարչութեան անդամ

Ի. Ե. ՓԻԹՈՅԵԱՆԻ

մահվան առիթով ներկայ ապրիլի 24-ին, շաբաթ օրը նշանակված «Ճահճի մէջ» պիեսի ներկայացումը յետաձգվում է ապրիլի 27-ին, երեքշաբթի օրվան: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նաւատորմի դերը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վայրենացման փաստերից. Գիւղական աշխարհում. Գիւղական բանկեր և մանր փոխառութիւններ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԱՒԱՏՈՐՄԻ ԴԵՐԸ

Ինչպէս հաղորդեց երէկվայ հեռագիրը՝ Հեռաւոր Արևելք ուղարկելու համար պատրաստվող նաւերից կազմվում է մի զինւորական նաւատորմ, որին յատկացվում է «Խաղաղ ովկիանոսի նաւատորմի երկրորդ էսկադրա» կոչումը. իսկ այն էսկադրան, որ այժմ գոյութիւն ունի Հեռաւոր Արևելքում, կը կոչվի առաջին էսկադրա:

Վլադիվօստօկի նաւախմբի նորերս ցոյց տուած իրական գործունէութիւնից, «Новости» լրագրի ասելով, պարզեց, թէ ինչ փոփոխութիւն կարող է առաջանալ Հեռաւոր Արևելքի ջրերում: Նաւախումբը երևան գալով Գէնզանի ջրերում, ապրիլի 12-ին, ոչ միայն սարսափ ազդեց ծովափեայ ճապօնական ազգաբնակութեանը, այլ և զրկեց Ճապօնիան այն ազատութիւնից, որով նա շարժում էր իր նաւերը Կորէայի արևելեան ափերի մօտ: Ոչնչացան երեք ճապօնական նաւեր, որոնցից ամենակարևորն էր «Կինշիումարու» նաւի խորտակումը, որովհետև այդ նաւի վրա գտնվում էին ճապօնական զօրքեր: Վլադիվօստօկի նաւախմբի կատարած այդ գործը ունի ահագին նշանակութիւն, որովհետև նա կը ստիպէ բաժանել ճապօնական ծովային ոյժերը և նրանց մի նշանաւոր մասը ուղարկել Վլադիվօստօկի նաւախմբի դէմ:

Թէ երբ պէտք է բալտիական նաւատորմը ուղարկվի պատերազմական բեմը, «Matin» լրագրի աշխատակիցը ծովակալ Վիրենիուսից տեղեկացել է, որ ծովակալը յոյս ունի հրաման ստանալ ծով դուրս գալու համար յունիսի 15-ի մօտերքը: Եթէ նաւախումբը ճանապարհ ընկնելու լինի առանց արկածների, այն ժամանակ նա կը հասնի Խաղաղ ովկիանոսին երկու ամսում: Իսկ հակառակ դէպքում կը պահանջվի չորս ամիս: Ծովապետ Վիրենիուս այն կարծիքի է, որ հազիւ թէ ճապօնացիները վստահանան ծովային կռիւ բանալ այնպիսի ահաւոր ոյժի դէմ, ինչպէս է բալտիական նաւատորմը:

Առևտրական հեռագրական գործակալութիւնը առաջ է բերում անգլիական «Times» լրագրի կարծիքը, որ ճապօնական զօրքերի փոխադրութիւնը առաջվայ պէս ենթարկված կը լինի մեծ վտանգի, եթէ Պօրտ-Արտուրը պաշարված չի լինի, մանաւանդ այն դէպքում, երբ նաւերը Պեչիլիական նեղուցով փոխադրում կը լինեն զօրքեր ափ իջեցնելու նպատակով Նիւչժուանի կամ Մանջուրիայի այդ մասի ծովեզրերից մէկում: Ճապօնացիների շահերը պահանջում են, որ նրանք յարձակում գործեն ռուսական զօրքի վրա աւելի վաղ, քան կարող կը լինի բալտիական նաւատորմը հասնել Խաղաղ ովկիանոսի ջրերին և աւելի վաղ, քան հնար կունենայ Ռուսաստանը ուժեղացնել իր զօրքը, որը առ այժմ դեռ աւելի թոյլ է, քան ճապօնացիների տրամադրութեան տակ եղածը: «Standard» լրագիրը արձանագրելով Վլադիվօստօկի նաւատորմի արած գործը, ասում է, որ ներկայ րօպէում չէ կարելի պնդել, թէ ճապօնական նաւատորմը իշխում է անպայման ծովի վրա և, որ անկասկած, զօրքերի փոխադրութիւնը դէպի ցամաք կապված կը լինի մեծ դժուարութիւնների հետ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՅՐԵՆԱՑՄԱՆ ՓԱՍՏԵՐԻՑ

Մեր գրական բարքերի տարեգրութիւնը գնալով բացասական, մռայլ երևոյթներով է զարդարում իր աղքատ ու տնանկ էջերը: Օր օրի վրա նոր փաստեր են լոյս ընկնում, որոնք հասկացողութիւնների վայրենացումն են ապացուցանում: Այդ փաստերից մէկը մի քանի օր առաջ էր «Մշակի» էջերում ստացել իր արժանաւոր անունը—ամենակեր խոզութիւն:

Մի ուրիշ փաստ էլ ես ունեմ ձեռքի տակ, մի փաստ, որ լուսաւորում է վայրենացումը ուրիշ կողմից, թէև մեզանում վաղուց յայտնի, վաղուց տխուր պատմութիւններով հռչակված կողմից:

Իմ առջև դրված է Պետերբուրգում նոր տպված ոտանաւորների մի փոքրիկ հատոր, որի անունն է «Անհունի էջերում», հեղինակութիւն Հ. Համբարձումեանի:

Գրքի շապիկը առաջին վայրկեանից ձեզ ցոյց է տալիս, որ գործ ունէք մօդեռնական մի գրուածքի հետ: Թուղթը դեկադենտական, նկարը, տառերը դեկադենտական: Վերջապէս այդ անունը—«Անհունի էջերում»—արդէն չափազանց բնորոշ դեկադենտութիւն է հոտում: Իսկ եթէ դուք առիթ էք ունեցել կարդալ մօդեռնական գրուածքներ առհասարակ, կարող էք, նախ քան գիրքը բաց անելը, գուշակել թէ ինչերի պիտի պատահէք այնտեղ: Անպատճառ կը լինի վերջալոյսը, անպատճառ աստղերի պար, կայծակների գետեր, ցնորք, երազ, դժոխք ու գեհեն, հուր ու կուպր և այլն և այլն:

Բաց էք անում պ. Համբարձումեանի գիրքը, տեսնում էք, որ չէք սխալվել: Բայց ոչինչ, կարդում էք: Դուք պատրաստ էք, մի քանի տասնեակ երեսներից յետոյ, խոստովանել հաճութեամբ, որ պ. Համբարձումեանը մօդեռնականութեան մէջ մի քանի համակրելի գծերով է զանազանվում, կամ, եթէ կամենում էք, ուղղակի աչքի է ընկնում: Նա յուսահատեցնելու չափ անհասկանալի չէ, նա քաջ է, նոյն իսկ կատաղի է, սանձարձակ երևակայութեան տէր և շատ տեղերում ազդում է բաւական զգալի կերպով: Համակրելի է ձեզ համար մանաւանդ այն, որ պ. Համբարձումեանի մօդեռնականութիւնը հասարակական մոտիվներ ունի, որ նա անորոշութեան մշուշներով չէ շշմեցնում ձեզ, այլ շատ տեղ բաւական պարզ կերպով ասում է, թէ ինչ է ինքը և դուք տեսնում էք, որ դա վշտոտ մի երգիչ է, համակված ժամանակի ցաւերով, բայց ոչ փոքրոգի, խեղճ յուսահատվող, այլ մրցութիւն ու յաղթութիւն ակնկալող:

Այս բոլորը շատ լաւ: Դուք պատրաստ էք այս բոլոր առաւելութիւնները տալ մօդեռնականութեան այս նորելուկ երևոյթին, թէև մի և նոյն ժամանակ կատարեալ իրաւունք ունէք զանգատվելու, որ չափազանց միանմանութիւն է տիրում «Անհունի էջերում». մի և նոյն մոտիվը, մի և նոյն արտայայտութեան ձևը: Սկսելով առաջին երեսից, դուք ընկնում էք պ. Համբարձումեանի սիրած կայծակների, շանթերի (որ մի և նոյն բանն է) տակ և այդպիսի մի ճանապարհորդութիւնը, երբ ձեր առջև անդադար իրար յաջորդում են «շանթէ թևեր», «երկինք կայծակաթոր», «շէկ շանթի, կայծակի հեղեղ», «շանթածին ծով», «կայծակէ թարգման սրտի», «կայծակի դև թափը», «հուր բոցկլտոց», «յոյս-յոյս երազներ», «սև դև ժայռեր», «ջինջ-նինջ գիշերներ», «թափ-թափ թևեր» և այլ այսպիսի ջուխտակ ու կենտ արտայայտութիւններ:

Բայց և այնպէս, կարելի է դեռ ներել պ. Համբարձումեանին: Նա դեռ նոր է գրում, դեռ սկսնակ է, իսկ մարդկային ամեն մի գործ սկզբից սովորաբար թոյլ ու պակասաւոր է լինում. կայ լուսնի տակ առաջ գնալ, կատարելագործվել, փոքրից մեծին հասնել: Ինչու չենթադրել, որ պ. Համբարձումեանից էլ, երևի, մի բան դուրս կը գայ: «Ամեն բանի վերջն է գովելի», ասում է ժողովրդական իմաստուն առածը: Հասնելով պ. Համբարձումեանի գրքի վերջին, դուք տեսնում էք, թէ որքան անարժան, որքան վատ ու անպատիւ վերջ ունի այդ նորելուկ մօդեռնականութիւնը:

Այդտեղ, այդ վերջում, պ. Համբարձումեան հետևակ մարդ է, այսինքն ոտներով ու կարճ տողերով չէ ճառում, այլ պրօզայով: Եւ ճառում է իր սեփական անձի, իր սեփական գործի մասին: Ահա ինչեր է նա ասում իր գրքին կամ, որ մի և նոյնն է, իր անձին.

1) «Քո տեղը յաղթ աստուածների զոռ ապարանքներն են անհաս...
2) «Գնա՛, մեծ ես դու...
3) «Մեծ ես չափազանց...
4) «Մտքից էլ վեր...
5) Վեհ ես չափազանց... (եր. 129).

Յետոյ:

6) «Դու մեծ ես անհուն, ազատ ես եւ յաղթ:
7) «Քո անհաս փառքի խորութիւնը վեհ ընդունակ է լոկ կուռքերը երկրի խիստ արհամարհել...
8) «Հպարտ իրենից փառքի ու կոչման յաղթանակը սուրբ ես զողացել իմ եւ քեզ իմ տուել...
9) «Աստուածավայել քո հպարտութեան առագաստը բաց...
10) «Դու աստուածներին ես պատկան—արժան:
11) «Դու բարձր ես անչափ...
12) «Դու բարձր ես անսահման: (եր. 131).

Ուղիղ մի դիւժին մեծութիւն, վեհութիւն, աստուածութիւն: Էլ մի բան մնաց, որ պ. Համբարձումեանը չը սեփականացնէր իրան: Զարմանալի է, թէ ինչպէս է պ. Համբարձումեանը մնում երկրի վրա: Այդ զարմանքը նա բացատրում է շատ սրտառուչ կերպով: Նա խղճում է մեր այս խեղճ աշխարհը, նա մեծ գութ ունի դէպի մեզ, խեղճ մարդիկս, և ասում է իր գրքին. Թէև դու ուղիղ մի դիւժին վեհութիւն և աստուածութիւն ունես, «բայց կա՛ց ու շրջի՛ր երկրի երեսին ի սէր այն խիզախ անյաղթ տենչանքի, որ մի օր ունայն այս կեանքը պիտ գայ հոգու ու մտքի աստուածութիւնը...»

Պիտ գայ, այո՛, պիտ ունայնութիւնը վերացնէ, գերմարդ պիտ դարձնէ ամենին: Մի շարք այսպիսի «պիտ»-եր: Եւ որպէս զի ոչինչ կասկած չը մնայ մէջտեղ, պ. Համբարձումեան Լերմօնտօվի Դևից էլ բարձր հանդիսաւորութեամբ բացականչում է. «Վկայ է յոյս-կոյս այդ վեհ երազին արեգակը վառ, որ անմահութեան և փառաց պսակ ունի ճակատին»:

Այսպէս թէ այնպէս, պ. Համբարձումեանի գրքոյկը իջեցնվում է աստուածների «զոռ ապարանքներից», արեգակի թիկունքից, աստղերի ծոցից, ամպերի ծալքերից: Նա, վերջապէս, մեր երկրի վրա է: Այստեղ ինչ կայ պ. Համբարձումեանի առջև: Ուրիշ ոչինչ, միայն գրախօսներ: Եւ նրանց սաստիկ հայհոյում է պ. Համբարձումեանը: Երկնքից գալ և հայհոյյել։ Հայը այդպէս է.—երկինքն անգամ չէ կարող նրան սովորեցնել համեստութիւն, քաղաքավարութիւն։

Արտագրում եմ աստուածների որդու հայհոյանքները ամենայն ճշդութեամբ։

«Խղճո՜ւկ ու Թշուա՜ռ իմ գրախօսներ... Եւ դուք միթակի ձեր ծով-մանրութեան, ձեր հոգու աժան խղճուկ սաղրութեան (?) ունայն կրքերով առաջ էք գալիս ջուր պղտորելու քաջ քննադատողի վեհութիւնն անհաս... Փոքրութեան ծնունդ, կուրութեան ազիզ գէշ-գարշ զաւակնե՜ր... Ջուր էք ստահակ դուք առաջ մղվում... Կարող էք այդպէս դուք միայն ցոյց տալ ձեր հոգու, սրտի կուրութիւնը դէչ։ Դուք կոյր էք առ միշտ։ Եւ միթէ ձեզ պէս խեղճ, ողորմելի մարդկանց է տրված քննադատել այն, ինչ վեր է կեանքից... այն, ինչ երկնքի ծնունդ է միայն, ինչ աստուածների յաղթ երազների փնջիցն է քաղուած... Երկիրը միթէ այնքան է ընկել—կուրացել, որ դուք, սեւ ունայն զաւակներ, ձեր ծանծաղութեամբ պիտ կարողանաք չափել-գնահատել ահեղ ու անհուն խորութիւնը մեծ... Հա՛, հա՛, հա՛, խղճո՜ւկ ով ծաղր՚լիներ... հա՛, հա՛, հա՛, Թշուառ ով ծաղրարժաններ... ձեզ պէտք է շղթայ. դուք գիտէք սիրել սեւ ու սո՜ւգ կապանք... Ձեր միտքն ու հոգին անկարող են վե՜ր, Անհունի լանջեր սուրսուրալ—ճախրել։ Դուք փոքր էք, չունի՛ք շանթէ հոգու Թե՜ւ։ Երկչոտ էք անչափ... Փառաց ու պատուի ցնորք ու երազ կայծակը ահեղ օտար է ձեզի... վախում էք դուք նորա դի՜ր բոցից։ Ծնված էք միայն դուք միշտ սողալու, սողալ էլ գիտէ՛ք ու սիրում էք այդ։ Սողալ գիտցողը ճախրել չէ կարող»։

Պատկերը ամբողջացրած է և հազիւ թէ երկար բացատրութիւնների կարօտ լինի։ Անձնապաստանութիւն, սանձարձակութիւն, մեծամտութիւն... ինչ ուզում էք անուանեցէք այդ տողերը, բայց ես կասեմ—կատարեալ վայրենացում գրական բարքերի, կատարեալ ինքնասպանութիւն մի գրողի համար, որ նոր է ոտք գրականութեան շէմքում դնում...

Ինքը, պ. Համբարձումեան, փորել է իր առջև մի խոր անդունդ։ Եթէ մօդեռնականութեան մուսաները խռով չը կենան նրա գլխին և նա վաղը, միւս օրը մի ուրիշ աւելի լաւ գործ ստեղծելու շնորք ստանայ, ի՞նչ պիտի ասէ իր այդ գործի մասին։ Այլ ես ածական, տիտղոս չէ մնացել, որ նա չը տայ իրան, այլ ես դափնի չէ մնացել. էլ ի՞նչ պէտք է ասէ նա։ Մի՞թէ միայն այն, որ նա է աստուածների ստեղծողն անգամ։ Բայց յետո՞յ, երբ երրորդ գիրքն էլ հրատարակէ, ո՞ւր պիտի տանեն նըրան մեծամտութեան այդքան հիւանդոտ գալարումները...

Ցաւալի է, ատելի է, մի և նոյն ժամանակ զզուելի, որքա՜ն զզուելի...

Երիտասարդ պարոններ, համեստ եղէք, չափ ճանաչեցէք, ի սէր գոնէ ձեր հիւանդոտ աստուածների խնայեցէք այն դժբաղդ գրականութիւնը, որի ասպարէզում տեղ էք գտել ձեզ համար։ Մի՛ վախեցէք քննադատութիւնից, մի՛ ատէք ազատ խօսքն ու դատողութիւնը։ Շնորհքը, տաղանդը, ազնիւ, տոկուն աշխատութիւնը երբէք չեն կորչի, չեն ոտնահարվի։ Աշխատեցէք այդպիսի միջոցներով առաջ գնալ, տեղ ու համակրութիւն գրաւել։ Իսկ վերոյիշեալի նման մեծամիտ վիժանքները կարող են միայն անկում և վայրենացում ապացուցանել...

Լ.

ԳԻՒՂԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Գարունը բացվելուն պէս գաւառական Թղթակցութիւններից ուրախ-ուրախ լուրեր ենք լսում վար ու ցանքսերի և մրգեղէնների առատութեան մասին, բայց, աւա՜ղ, երկար չէ տեւում նրանց այդ ուրախութիւնը. հունձը, այգեկութը դեռ չը սկսած, մէկ էլ ես տեսնում «վայնասուն բարձրացաւ». այս ինչ գաւառում կամ գիւղում չը տեսնված, ծերերին անգամ զարմանք պատճառող, ընկուզի մեծութեամբ տեղացող կարկուտը մի քանի րօպէի մէջ փչացրեց գիւղացու միակ յոյս-ապաւէն ցանքսերը. այգիների մրգատու ծառերը, խաղողի վազերը տերևազուրկ, ճղնակոտոր եղան, գետնին հաւասարվեց ամեն ինչ։ Գիւղացիք ամեն ինչից յոյսները կտրած, այժմ արտերի, այգիների կողքը կտրած, ձեռքերը ծոցերին, սգաւորի պէս, աղի արցունք են Թափում, իրանց սև օրը լալիս...

Իսկ եթէ Շուլաւէրի մի աչքաբաց, հեռատես տանուտէր խորհուրդ է տալիս իր գիւղացիներին և համախօսականով տարեկան մի 1000 ր. ծախք պահանջում՝ կարկտահար Թնդանօթ բերել տալու և կարկուտից անցեալ տարի 158,000 ր. վնասի ենթարկված շուլաւէրցիներին ապագայում կարկուտից ընդմիշտ ապահովելու համար, հասարակութիւնը բողոքում է ասելով՝ «վա՜յ մեր օրերին. Աստծու դէմ էլ են ուզում ջահիլները կրակ վառել»...

Այս ինչ քաղաքում կամ գիւղում երեխաների մէջ ծաղիկ, կարմրուկ, տիֆ, քութէշ... կամ անասունների մէջ՝ սապ, ժանտախտ, դաբաղ (ящура) և ինչ-ինչ տեսակի համաճարակ հիւանդութիւններ են երևում... Ինչքան ուզում էք քարոզեցէք դրանց, որ զանազան սուրբերին բերած զոհերը, տատմէրների, գրբացների, կախարդների, դալաքների տուած միջոցները, խորհուրդները, բացի վնասից, երբէք օգուտ չեն բերի ձեզ, բժիշկ է պէտք, բայց ո՞վ է ձեզ լսողը, սրանք դարձեալ իրանց իմացածը ձեռքից չեն տալիս. «Է՜հ, հէր օրհնած, բժիշկ-մժիշկ դիփ էլ դարդակ բաներ են, պատճառաբանում են մեր գիւղացիք. մարդուս ճակատին ինչ որ գրված է, էն էլ պէտք է կատարվի»... իսկ մենք շարունակում ենք ամեն օր սրանց այդ ինքնակոչ բժիշկների պատճառած անմեղ զոհերի պատմութիւնները կարդալ...

Ի դէպ, մի բնորոշ դէպք ես յիշեմ այստեղ. 1900 Թ. ամառը քանի մի օրով Նուխու վիճակի Ե. գիւղը գնացած լինելով, լսեցի, որ ահա 2 ամսից աւելի է, ինչ «ղարա» տաւարի ժանտախտը հարևան Ղաւաբաշի գիւղից մօտ հազար գլուխ տաւար է կոտորել։ Փոքր ի շատէ հիւանդութեան կասկածելի նշաններ ցոյց տուող տաւարներին էլ, բժշկի հրամանով, զատված՝ գիշեր-ցերեկ գիւղից 8-9 վերստ հեռաւորութեան վրա են պահում։ Հարևան գիւղացիներին էլ խստիւ արգելված էր տաւարով Ղաւաբաշի մտնել կամ նախիրը նրանց հանդերին մօտեցնել։ Մի և նոյն ժամանակ Ե. գիւղումն էլ «դաբաղ» կոչված հիւանդութիւնն էր երևացել. սակայն գիւղացիք ծածկում էին բժշկից, սատկած տաւարներին էլ գիշերով դուրս էին տանում և գիւղից հեռու տեղ Թաղում։ Թարսի պէս Ե. գիւղի տանուտէրը այդ օրերում մի գողացված ձիու պատճառով գիւղացիներից մէկի վրա կասկածելով՝ բռնում ու մի լաւ «տեսնում» է։ Ծեծված գիւղացին տանուտէրից վրէժխնդիր լինելու համար, ծածուկ գնում է Ղաւաբաշի և բժշկին յայտնում Թէ՝ «Ե. գիւղում վաղուց տաւարի հիւանդութիւն կայ, բայց տանուտէրը գիւղացիներից կաշառք վերցնելով՝ ծածկում է է վարչութիւնից և Թէ սատկած տաւարներից մէկն էլ հէնց էն է գիւղի բէկի ամբարի յետևի ձորում է Թաղած...«

Ինչ ասել կուզի, բժիշկը իսկոյն գալիս է Ե. գիւղը՝ հետախուզելու. սակայն տանուտէրը այդ իմանալով, իսկոյն գիւղի իշխաններից մի քանիսի և իրանց քահանայի հետ բէկի միջնորդութեանն է դիմում։ Բժիշկը տանուտէրի հետ բէկի ամբարի մօտի ձորը իջնելուն պէս, բէկը դիմաւորում է նրանց և բժշկի հարցին Թէ՝ այս ի՞նչ Թարմ փորվածքներ են այստեղ, բէկը պատասխանում է Թէ՝ այդ փոսերից այս շաբաթ կաւ (глина) եմ կրել տուել կալս սրելու—պատրաստելու համար։ Այստեղից բժշկին, իր օգնականի հետ, բէկը իր մօտ սուրճի հրաւիրելով, ազատում է տանուտէրին բժշկի ճանկից։ Այն ինչ Ե. գիւղում հաստատ տաւարի հիւանդութիւն կար, որից հէնց նոյն իսկ բէկի 2 տարեկան մի հորթն էլ դէպքից նախընթաց օրը սատկել էր, իսկ հիւանդ մօրն էլ գոմում Թագցրել էին...

Ինչպէս տեսնում էք պատմածիցս, մեր գիւղացիները հիւանդութիւնների ժամանակ ո՛չ Թէ բժշկի օգնութեանն են դիմում, այլ շատ անգամ խոյս են տալիս, աշխատում են դեռ եղած հիւանդութիւնն էլ Թագցնել նրանից։

Վերցրէք, վերջապէս, մեր խաղողի վազերի, պտղաբուծութեան, մեղուապահութեան, շերամապահութեան վերաբերեալ զանազան հիւանդութիւնների, սերմնափոխութեան սիստեմի, հողը պարարտացնելու... մասին մասնագէտների յայտնի և օգտաւէտ միջոցները քարոզեցէք, կրկնեցէք հազար անգամ, ո՞վ է ձեզ լսողը։ Այդ առաջարկութիւնները կարծես հէնց առաջարկութիւններ էլ պէտք է մնան և ոչ ոք մեզնից, կարծես, այդ խելացի, փորձված միջոցներից օգտվել չէ ուզում. հապա ի՞նչպէս չասենք՝ «սաղլին էլ—լող պիտի»։

Գր. Խօջամիրեան

Բալախանի

ԳԻՒՂԱԿԱՆ ԲԱՆԿԵՐ ԵՒ ՄԱՆՐ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ

(Նամակ Երևանից)

II

Որ մեր ժողովրդի ներկայ պայմաններում գիւղացի երկրագործ դասին վաշխառուների կեղեքումներից և տնտեսական քայքայումներից ազատելու համար միակ գործնական միջոցը պէտք է համարել զուտ գիւղական բանկերի և մանր փոխառութիւնների իրագործումը, այդ մասին լսենք մի այլ հեղինակաւոր կարծիք։

1902 Թուին Երևանում կազմվեց 1), այսպէս ասած, գիւղատնտեսական կարիքները քննող Երևանի նահանգական կոմիտէտ, որի մէջ մասնակցութիւն ունեցան, բացի պաշտօնական անձնաւորութիւններից, այն է նահանգապետից, փոխ-նահանգապետից, Երևանի պետական կալուածքների, կազեօննայա պալատի, պետական բանկի կառավարիչներից և հարկահաւաքների տեսչից, նաև կալուածատէրեր Մէլիք-Ադամալեան, Շանգիրէյ, Աթաբէգեան, Սուլթանօվ, ագրօնօմ Կանդուրալեան, ինժեներ-գիդրավլիկ Տասլօվսկի և բուն երկրագործ դասից երեքական հոգի իւրաքանչիւր գաւառից, որպէս գիւղատնտեսական կարիքների անմիջական գիտակիցներ։

Յիշեալ կոմիտէտը 1902 Թուի վերջին և 1903-ի սկզբի ամիսներում ունենալով մի շարք խորհրդակցութիւններ և քննելով գիւղատնտեսական կարիքները և նրանց գոհացումն տալու միջոցները, գտաւ, որ երկրագործ դասի տնտեսական նեղ կացութիւնը և քայքայման վիճակը մեծ չափով հետևանք է նաև մանր փոխառութիւնների բացակայութեան։ Դրամի չըգոյութիւնը զգալի է ամեն մի քայլում—մանաւանդ գարնան, կարիքների և հարկերի գանձման ժամանակ։ Այս հանգամանքը առաջ է քաշել վաշխառուների և գիւղական կուլակների մի դաս, որոնք օգտվելով գիւղացու նեղ դրութիւնից՝ վերցնում են անխիղճ տոկոսներ և անում մթերքների կիսականխագնումներ։ Կոմիտէտի կարծիքով, եթէ վաշխառուների ճանկերից չը խլվի գիւղական ազգաբնակութիւնը, նրա բարեկեցութիւնը կընթանայ դէպի անկումն՝ աւելի ու աւելի մեծ չափով։

Կոմիտետը, անհրաժեշտ գտնելով մանր փոխառութիւնների կազմակերպութիւնը, բայց մի և նոյն ժամանակ ի նկատի ունենալով մեր ժողովրդի դրամական չքաւորութիւնը և մի ինքնուրոյն հասարակական գործ ղեկավարելու ընդունակ անձանց բացակայութիւնը, աչքի առաջ ունենալով մի երկու անաջող փորձեր, անիրագործելի և անհաստատուն գտաւ այժմ գոյութիւն ունեցող մանր փոխառութիւնների ձևերը, այն է փոխատու խնայողական դրամարկղները և վարկային ընկերակցութիւնները։

Եւ աւելի մօտից ծանօթանալով խնդրին, որ իւրաքանչիւր գիւղացի ընտանիք ունենում է դրամական պահանջի համեմատաբար փոքր չափ—այն է 15—25 րուբլի և սակաւաթիւ դէպքերում միայն 50—60 րուբլի և որ այսպիսի քանակի փոխառութիւններին բաւարարութիւն տալու համար սկզբում բաւական է մի ոչ այնքան էլ մեծ—այն է 250—300 հազար րուբլի գումար, կոմիտէտը գտաւ ամենանպատակայարմարը Երևանի նահանգի գիւղական ազգաբնակութեան համար, այսպէս անուանած, մանր փոխառութիւնների նահանգական կենտրօնական գիւղական բանկը։ Ենթադրելի գիւղական բանկի անհրաժեշտ գումարը՝ 250—300 հազար րուբլի, պէտք է բաց Թողնէ կամ պետական բանկը և կամ կառավարչական մի այլ հիմնարկութիւն։

Առաջ բերած հանգամանքների հիման վրա, կոմիտէտը ցանկալի գտաւ գիւղական մանր փոխառութիւնների բանկը ամբողջ նահանգի համար բանալ քաղաքում, բանկի ղեկավարութիւնը յանձնել կառավարութեանը, փոխառութիւնների քանակը որոշել ոչ աւել 100 րուբլուց իւրաքանչիւր գիւղացի ընտանիքի համար, իսկ ինչ վերաբերում է բանկային բուն գործողութիւններին (операція), նրա և գիւղացի կլիէնտների մէջ գործը հեշտացնելու և աւելի նպատակայարմար հիմունքներով առաջ տանելու համար՝ ունենալ իւրաքանչիւր գաւառում մի մի օժանդակ կոմիտէտ, որը կընդունէր փոխառութիւն խնդրող գիւղացիների խնդիրները, կը քննէր խնդրատուների կարիքը և կարողութեան չափերը և իր կարծիքների հետ այդ խնդիրները ներկայացնելով բանկի վարչութեանը, կը ստանար դրամները և կը յանձնէր իւրաքանչիւրին ըստ պատկանելոյն։ Մի խօսքով գաւառական օժանդակ կոմիտէտները, որոնք անշուշտ կը կազմվէին տեղական ազգաբնակութեան միջից, կը հանդիսանային որպէս միջնորդներ բանկի և գիւղական ազգաբնակութեան մէջ։ Որքան էլ այս առիթով աւելիք ունենայինք, բայց այն հանգամանքը, որ այժմեան պայմաններում իւրաքանչիւր նախագիծ այնքան էլ հնարաւոր չէ իրականացնել՝ ուստի հաշտվելով երկրորդական Թերութիւնների հետ, կասենք, որ կոմիտէտի այս առաջարկութիւնը մի շատ նպատակայարմար ձեռնարկ է, որի իրագործումը, որքան շուտ տեղի ունենար, այնքան լաւ կը լինէր։

Այս անհրաժեշտ պահանջին գոհացումն տալու պարտականութիւնը, մեր կարծիքով, ընկնում է պետական բանկի վրա, որը ոչ միայն կարող է, այլ և պարտաւոր է իրականացնել. բայց թէ ինչու, այդ մասին յաջորդ անգամ։

Ա—Դօ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ Թիֆլիսում վախճանվեց Եսայի Փիթօյեան կարճատև հիւանդութիւնից յետոյ։ Հանգուցեալը յայտնի է Թիֆլիսին իր անխոնջ ջանքերով պատուաստել և զարգացնել դրամատիկական գործը Թիֆլիսում։ Նրա եռանդուն աջակցութեամբ սկսեց գործել Թիֆլիսում արտիստական ընկերութիւնը, որի համար Փիթօյեանը երեք տարի առաջ կառուցեց այն հոյակապ շինութիւնը, որտեղ գտնվում է դրամատիկական Թատրօնը։ Հանգուցեալը բարի և կարեկից մարդ էր, համակրող հասարակական ձեռնարկութիւնների. նա հիմնադիրներից մէկը եղաւ հայոց դրամատիկական ընկերութեան, որ հիմնվեց երկու տարի սրանից առաջ։ Սիրելով Թատրօնական գործը, նա նուիրեց նրան իր կեանքի մեծագոյն մասը և իր հարստութեան մի խոշոր մասը։ Նրա մահվան առիթով հայոց ներկայացումը, որ նշանակված էր վաղը, շաբաթ, ապրիլի 24-ին, յետաձգվում է հանգուցեալի Թաղումից յետոյ, այն է երեքշաբթի, ապրիլի 27-ին։

—

Մեզ հաղորդում են, որ երկրագործութեան մինիստրութիւնը անցեալ տարվայ օրինակով, ներկայ 1904 Թւի ամառը պէտք է շարունակէ ծանօթացնել մեր երկրի ազգաբնակութիւնը կատարելագործված կաթնատնտեսութեան հետ։ Յատուկ շրջիկ կաթնարան կը գործէ Ալէքսանդրապօլի և Կարսի գաւառներում և ցոյց կը տայ գիւղացիներին սերզատ մեքենայի գործունէութեան և իւղ պատրաստելու արհեստի հետ։ Կաթնարանը կը սկսի իր գործունէութիւնը մայիսի սկզբներում։

—

Մեզ հաղորդում են, որ Երևանի կողմերում գարնան ցրտերի պատճառով վնասվեցին դեղձի ծաղիկները, այդ պատճառով այս տարի դեղձի բերքը կը լինի աղքատ և անկարելի կը լինի կօնսերվներ պատրաստելու մեծ քանակութեամբ։

—

Կովկասի քաղաքացիական բաժնի բժշկական վարչութիւնը ստացել է արդէն Բարձրագոյն հաստատված ծրագիրը, որ վերաբերվում է գիւղական-բժշկական գործի և բժշկական պերսօնալի բարեփոխութեանը։ Այդ ծրագրի պահանջած բարեփոխութիւնները պէտք է աստիճանաբար գործադրութեան մէջ մտնեն։ Մեր երկրում գոյութիւն ունեցող բոլոր գիւղական-բժշկական ընդունարանները պէտք է վերածվեն հիւանդանոցների, իսկ Դաղստանի և Կարսի շրջանում պէտք է նոր բացվեն՝ առաջինում՝ 3, երկրորդում 1 հատ նոր հիւանդանոցներ, որոնք՝ ինչպէս և միւսները, պէտք է ծառայեն իբր ձրի բուժական կայարաններ շրջապատ գիւղերի համար։ Հիմնվում են և ֆէլդշերական կէտեր հիւանդներին մշտական շարժական օգնութիւն հասցնելու համար։ Թէ հաստատուն հիւանդանոցները և Թէ շարժական ֆէլդշերական կէտերը պէտք է ազգաբնակութեանը մատակարարեն ձրի դեղեր։ Այդ նորամուծութիւնների և հներն ընդարձակելու համար 1904, 1905 և 1906 Թւերի ընթացքում՝ յատկացված է 40,000 րուբլի, իսկ յետոյ 1907, 1908 և 1909 Թւերի համար յատկացվելու է 587,300 ր., որպէս զի ներկայ ծրագիրը լիապէս գործադրութեան մէջ մտնի։

—

Ինչպէս լսվում է, Լօձի խոշոր գործարանատէրերից մէկն ուզում է Մուղանի անապատը մշակել և բամբակ ցանել, բերելով ջուր խոշոր մեքենաներով։

—

Թիֆլիսում հաստատվել է մի նոր բարեգործական ընկերութիւն, որի անունն է «Ս.-Պետերբուրգի կանանց բժշկական ինստիտուտի և կանանց բարձր կուրսերի՝ Կովկասի միջնակարգ դպրոցներում աւարտած ուսանողուհիների նպաստման ընկերութիւն»։ Այդ նոր ընկերութեան կանոնադրութիւնը հաստատվել է ներքին գործերի մինիստրի կողմից 1903 Թ. դեկտեմբերի 22-ին։ Ընկերութեան նպատակն է օգնել այն չունևոր օրիորդներին, որոնք աւարտելով իրանց ուսումը Կովկասի

---

1) Տես «Памятная Книжка Эриванск. губ. на 1904 года».

իգական միջնակարգ դպրոցներում, մտնում են բժշկական ինստիտուտը։ Կանոնադրութիւնը խմբագրված է բոլոր բարեգործական ընկերութիւնների կանոնադրութեան նման։ Անդամակցական տուրքը տարեկան 3 րուբլի է։ Ի նկատի ունենալով ընկերութեան համակրելի նպատակը, ցանկալի էր, որ Թիֆլիսի հասարակութիւնը չը խնայէր նպաստելու նրան և դրանով միջոց տար ընկերութեան նպաստելու իգական բարձր կրթութեան գործի զարգացման։

—

Մեզ հաղորդում են, որ վաղը, շաբաթ, ապրիլ 24-ին, տեղի կունենայ Կայսերական Կովկասեան բժշկական ընկերութեան տարեկան նիստը։ Նիստը կը բացվի երեկոյեան 8 ժամին ընկերութեան բնակարանում (Սապերնեայա փողոց, տուն № 51)։

—

Բագուի լրագիրները հաղորդում են, որ այնտեղ ներկայ ապրիլի 18-ին բացվեց և օրհնվեց նոր դպրատուն-ընթերցարանը պ. Ժուկովսկու՝ կաթօլիկների բարեգործական ընկերութեան անդամի նախաձեռնութեամբ։

—

Պետերբուրգի կանանց ընկերութիւնը հրաւիրված է մասնակցելու Բեռլինում յունիսին տեղի ունենալիք կանանց միջազգային կօնգրէսին։ Կօնգրէսի զբաղմունքի գլխաւոր առարկաները լինելու են. կանանց կրթութիւնը, կանանց արհեստները, կանանց հասարակական գործունէութիւնը, նրանց իրաւական վիճակը։

—

Մոսկվայի բնութեան ուսումնասիրութեան Կայսերական ընկերութիւնը Կովկաս է ուղարկել Մոսկվայի համալսարանի հանքաբանական ամբիօնի թեկնածու Վ. Վ. Արշինովին՝ Թիֆլիսի նահանգի շրջանում հանքաբանական հետազօտութիւններ անելու համար։

—

Բագուի նահանգապետը երկրորդ անգամ դիմել է քաղաքագլխին և առաջարկել, որ շտապի հոգ տանել անմիջապէս յանձնել գանձարանին 89,275 ր., որ քաղաքը պարտաւոր է տալ գանձարանին իբրև նպաստ տեղական ոստիկանութեան պահպանութեան համար։

—

Անդրկովկասեան երկաթուղիների վրա ծառայողների այրիները ստանում են կենսաթոշակ, եթէ նրանց ամուսինները մեռել են մինչև 1904 թւի յունվարի 1-ը։ Կենսաթոշակի չափը կախված է հանգուցեալների ծառայութեան ժամանակի, նրանց ստացած ռոճկի չափից։ Երբեմն այդ կենսաթոշակները հասնում են տարեկան 400—500 րուբլու։ Այդ կենսաթոշակները տրվում են 10 միլիոնից մի առանձին դրամագլխի տոկոսներից, որ մացրել են պետական գանձարանը մեր երկրի երկաթուղիների ծառայողների կենսաթոշակները զօրեղացնելու համար։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Ահա մտնում է մայիս ամիսը, դեռ տաքութեան երես չենք տեսնում։ Ապրիլի 4-ին սաստիկ ձիւն եկաւ. մօտ $^{1}/_{2}$ արշին ձիւն նստեց քաղաքում, և մինչև հիմա էլ չէ հալվում։ Մարդիկ ման են գալիս ձմեռվայ հագուստով, կրկնակօշիկով և ձեռնոցներով։ Մեզանում միսը ծախում են ոչխարինը 13 կ., տաւարինը 10 կ. չը նայելով որ սակագին է նշանակած, ոչխարին 10 կ., իսկ տաւարին 8 կոպէկ»։

—

ԿՈՂԲԻՑ մեզ գրում են. «Այստեղ գարունը սովորականից աւելի շուտ էր սկսվել, ծառերը ծաղկել էին, ցորենի արտերը բարձրացել, մի խօսքով ամեն տեղ կենդանութիւն էր տիրում և տարին լաւ բերք էր խոստանում. Նոյն իսկ քիւրդ ազգաբնակութիւնը, գարնան հրաշալի օրերը տեսնելով, վաղուց արդէն դուրս էր եկել վրանները։ Բայց անողոք բնութիւնը կարծես թէ այս տարի ուզում էր խաբելով պատժել բոլոր ազգաբնակութեանը և իր արհաւիրքով ոչնչացնել նրա թէ տարվայ բերքը և թէ նորածին անասուններին։ Ապրիլի 3—4-ին քամախառն ձիւն թափվեց երկնքից. այժմ դաշտերը ձիւնի սպիտակ սաւանով ծածկված են $^{1}/_{2}$ արշին հաստութեամբ. գիշերը 5% ցուրտ էր»։

—

ԱՍՏԱՊԱՏ գիւղից (Հին-Նախիջևանի գաւառ) մեզ գրում են. «Այս ձմեռ մեզ մօտ սարսափելի, չը տեսնված ցուրտ էր, բայց, չը նայած դրան, ձիւն սակաւ եկաւ և սաստիկ ցրտերը ազդեցին գիւղացու տնտեսութեան վրա։ Դեռ ես անցեալ տարվանից խեղճ գիւղացին նեղութեան մէջ էր և այս սարսափելի ցրտերը բոլորովին ուժասպառ արեցին նրան։ Բայց դրանով չը վերջացաւ գիւղացու տառապանքը. այժմս այն աղէտը, որ աւելի է սարսափեցնում նրան և սպառնում քան ձմեռվայ ցրտերը, դա «մորեխն» է։ Անցեալ տարի ևս այդ «թևաւորները» առաջ եկան, բայց գիւղացու գործ դրած ջանքերով շուտ ջնջվեցան։ Այո, ջնջվեցաւ մորեխը, բայց նա թողեց դաշտերում, սարերում իր աննկատելի ձուիկները, որոնք այժմ սպառնում են գիւղացուն։ Սակայն գիւղացին քնած չէ, նա թողած իր առօրեայ հոգսերը, իր ընտանիքով ընկած է դաշտերում և հաւաքում է այդ «հարթիչների» ձուաները. Նրանք մօտաւորապէս ամեն օր հաւաքում են 3—4 պուդ ձու, որը իսկոյն և եթ այրում են»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Մի անգլիական կարծիք։ Անգլիական պարլամենտի անդամ Հենրի Նորման, որ նորերս գնացել էր Պետերբուրգ, վերադառնալով Լօնդօն, ուղղել է «Times» լրագրին մի նամակ, որի մէջ ասում է. «Պէտք է որքան կարելի է շուտ հասկանալ, թէ պատերազմը կարող է միայն մի ելք ունենալ։ Եապօնիայի յաղթութիւնը անհաւանական է. եապօնական կառավարիչները պէտք է այդ իմանային պատերազմից առաջ։ Ըստ երևոյթին, նրանք սկսեցին պատերազմը, յուսալով, որ առաջին աջողութիւններից յետոյ ուրիշ պետութիւններին ևս կը ձգեն պատերազմի մէջ և, շնորհիւ նրանց օգնութեան, կապահովեն իրանց յաղթութիւնը։ Այդ բանի մէջ նրանք խաբվեցին։ Այժմ սպասում են, որ իրանց բարեկամները կընդունեն իրանց վրա միջնորդութիւն, որով կը փրկեն Եապօնիան կատարեալ պատժից՝ խաղաղութիւնը խախտելու համար։ Սակայն Ռուսաստանը ոչ մի դէպքում միջնորդութիւն չի ընդունի։ Ոչ մի պետութիւն ռիսկ չի անի դրա համար պատերազմել»։ Ապա Նորման յայտնում է, թէ ինքն հաւատացած է, որ Ռուսաստանը, ամրապէս ապահովելով իրան Եապօնիայի ապագայ յարձակումներից, չի պահանջի նրանից հողային և այլ այնպիսի պայմաններ, որոնք կարողանային առաջ բերել վճռական ընդդիմադրութիւն պետութիւնների կողմից։ Նորմանը ներկայ պատերազմի պայծառ կողմը տեսնում է այն բանի մէջ, որ պատերազմը վերջանալուց յետոյ կը կայանայ Անգլիայի և Ռուսաստանի մէջ լայն և հաստատ համաձայնութիւն, անգլօ-ֆրանսիական համաձայնութեան նման։ (Н. Вр.)

Մի եապօնացու կարծիք։ Լօնդօնից հեռագրում են «Н. Вр.» լրագրին, որ Եապօնիայի ներքին գործերի նախկին մինիստր բարօն Սուէմատցու, որ այժմ գտնվում է այդ քաղաքում, «Constitutional» կլուբում ապրիլի 15-ին կարդաց մի դասախօսութիւն Հեռաւոր-Արևելքի հարցի մասին։ Նա յոյս յայտնեց, որ անգլօ-եապօնական դաշնակցութիւնը, կնքված 5 տարով, կը շարունակվի և կը դառնայ անխզելի։ Եապօնիայի շահերը իբր թէ այնքան համերաշխ են անգլիական և ամերիկական շահերի հետ, որ Եապօնիան պատերազմ է վարում որպէս թէ Անգլիայի և Ամերիկայի հաւատարմատարը լինի։ Եապօնիան ուրիշ ոչ մի բան չէ ցանկանում, բացի քաղաքակրթութեան պրօգրէսը և մարդկութեան բարիքը։

Դասախօս Սուէմատցուի այդ յայտարարութեան չափազանցութիւնը հակաճառութիւն առաջ բերեց ունկնդիրների մէջ։ Երեք կլուբներ դիմեցին «Н. Вр.» լրագրի թղթակցին, որ նա ևս դասախօսութիւն կարդայ Ասիայի պրօբլէմների մասին։

Եապօնական նոր պատուէրներ Անգլիայում։ Նիւ-Եօրկի լրագիրներից մէկը յայտնում է, որ Եապօնիան պատուէր է տուել Անգլիայի Վիքկէր, Մաքսիմ և Արմշտրօնգ նաւաշինարաններին երկու նոր զրահաւոր նաւ շինել։ Այդ նաւերը եւրօպական նաւատորմերի բոլոր պատերազմական նաւերից պէտք է աւելի ուժեղ լինեն։ Նրանց երկարութիւնը 445 ֆուտ է, որով 20 ֆուտով գերազանցում է անգլիական ամենախոշոր զրահաւորներից։ Նրանց տարողութիւնը պէտք է լինի 16,400 տակառաչափ (տօնն)։ Նրանց գլխաւոր բատարէաները իրանց նմանը չը պէտք է ունենան եւրօպական նաւատորմում։ Նրանցից իւրաքանչիւրը բաղկացած է 4 տասներկու դիւյմային, 4 տասը և 6 վեց դիւյմային թնդանօթներից։ Ընթացողութեան արագութիւնը պէտք է լինի 19 հանգոյց (33 վերստ մի ժամում)։ (Новое Время).

Սանիտարական վիճակը Խարբինում։ «Matin» լրագրի թղթակիցը ամենամռայլ գոյներով նկարագրում է Խարբինի սանիտարական վիճակը։ Քաղաքում չը կան ոչ սալայատակած փողոցներ, ոչ կանալիզացիա, ոչ կոյուղիներ, արտաքնոցներ։ Ահա ինչի համար Խարբինում, ուր երկու տարի առաջ խօլէրա կար և ամեն ամառ մեծ աւերումներ է գործում տիֆը, կարող է այս տարի բռնկել ժանտախտ։ Կեղտոտութիւնը անտանելի կը լինի ամառը երեսուն աստիճան տաքութեան ժամանակ։ Խարբին են բերում վիրաւորվածներին բժշկելու. գուցէ նրանք բժշկվեն վէրքերից, բայց կը մեռնեն խօլէրայից կամ տիֆից։ Թղթակիցը խորհուրդ է տալիս ծախսել վիրաւորեալների համար հանգանակած գումարների մի մասը Խարբինի սանիտարական դրութիւնը բարւոքելու համար։ (Новое Время).

Չինաստանի բռնած ուղղութիւնը։ Պարիզի չինական դեսպանութիւնը յայտնել է մամուլի ներկայացուցիչներին, թէ Պէչիլիի փոխարքան չի վարանի կախել տալ գեներալ Մաին, Մանջուրիայի սահմանում կենտրօնացած չինական զօրքերի հրամանատարին, եթէ նա յանդգնի խախտել չէզոքութիւնը իրան յանձնված շրջանում։ Գեներալ Մա՛ն, որի տրամադրութեան ներքոյ գտնվում է 15,000 զօրք, ամենևին չարամիտ մարդ չէ։ Ճիշդը այն է, որ Պեկինում ժողովուրդը գտնվում է բուդդայական քահանաների ազդեցութեան տակ, որոնք համակրում են Եապօնիային։ Եթէ այդ պատճառով ռուսները վրէժխնդրական միջոցներ ձեռք առնեն, չինական կառավարութեան համար շատ դժուար կը լինի չէզոքութիւնը պահպանել։ (Бирж. Вѣд.).

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ինչպէս հաղորդում է Բեռնի խաղաղութեան միջազգային բիւրօի օրգանը, մարտի 29-ին Լօնդօնում կայացել է Ռօչէստէրի եպիսկոպոսի նախագահութեամբ մի կարևոր միտինգ՝ արևելքի ներկայ դրութեան մասին, ուր խօսվեցին այն պարտականութեան մասին, որ այդ դրութիւնը դնում է եւրօպական պետութիւնների վրա, մասնաւորապէս Ֆրանսիայի, Անգլիայի և Իտալիայի վրա։ Ֆրանսիական պատգամաւորների յատուկ խնդրանօք, որի հետ համաձայն էին Անգլիայի ամենականաւոր հռետորները և մասնաւորապէս պ. Ջէմս Բրայս, հայոց հարցը քննվեց այդ միտինգում և միտինգի քուէարկած որոշումների մէջ մտաւ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

22 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մանջուրական զօրքի հրամանատար գեներալ-ադիւտանտ Կուրօպատկինի ամենահպատակօրէն հեռագիրը ապրիլի 21-ից. «Գեներալ Կաշտալինսկիյ զեկուցանում է. իմ պարտքն եմ համարում զեկուցանել այն ծանր, բայց փառաւոր կռւի հանգամանքները, որ իմ հրամանատարութեան տակ գտնվող զօրքերն ունեցան եապօնացիների գերազանց ոյժերի հետ ապրիլի 18-ին Տիւրէնչէնի մօտ։ Արդէն առաւօտեան, ապրիլի 17-ին, եապօնացիներն սկսեցին նեղել իմ զօրքի ձախ թևը, նախընթաց օրը կռւով գրաւելով Կասանեան բարձրութիւնները, այդ պատճառով էլ ես հրամայեցի 22-դ գնդի բատալիօններին, որոնք գրաւած ունէին Խուսան, յետ քաշվել Այխէի վրայով դէպի Պոտէտնզի դիրքը։ Հէնց այդ օրը առաւօտվանից սկսվեց Ի-Զժուից ամբողջ տիւրէնչէնեան դիրքի մի անսովոր խիստ և երկարատև ռմբակոծութիւն. զգացվում էր, որ եապօնացիները այդ ռմբակոծութիւնից յետոյ, երբ արձակված էին 2000-ից աւելի ռումբեր, յարձակողական դիրք կընդունեն։ Ապրիլի լոյս 18-ի գիշերը ես հրաման ստացայ գեներալ Զասուլիչից ընդունել կռիւը, մնալով նախկին դիրքի վրա. իմ դիրքի ձախ թևի վրա գետի անցքերը Պոտէտնզիի մօտ պաշտպանում էին 22-դ գնդի երկու բատալիօններ և 6-րդ բրիգադայի 3-րդ բատարէան. եապօնացիներն սկսեցին յարձակումը առաւօտեան 5 ժամին, ուղղելով դէպի գետի անցքերը Այխէի վրայով հետևակ զօրք, ոչ պակաս մէկ դիվիզիայից, որը զօրասիւներով, առհագին կորուստներ կրելով, անցաւ գետի անցքերով և յարձակում գործեց դիրքի վրա, որը 36 դաշտային բատարէաների և պաշարող թնդանօթների կրակի էր ենթարկվում թևի կողմից Ի-Զժուից։ 12-րդ գունդը գրաւեց յետևի դիրքը 6-րորդ բրիգադայի 2-րորդ բատարէայի և գնդաձիգ վաշտի պաշտպանութեամբ, խիստ կրակով կանգնեցնելով եապօնացիների յարձակումը։ Մօտ կէսօրին ես իմացայ, որ եապօնացիները տեղահան արեցին Չինգօուի մօտ կանգնած 22-դ գնդի բատալիօնը և անցան իմ ձախ թևի ետևը։ Ցերեկվայ մօտ մէկ ժամին մօտեցան իմ ձախ թևին 11-դ գնդի երկու բատալիօններ և փոխ-գնդապետ Մուրավսկու բատարէան, որոնք բերված էին պահեստի զօրքից Շախեդզիից։ Ես հրամայեցի 11-դ գնդին բռնել ետևի կողմի տիրող դիրքը երկկողմեան պաշտպանողական շարքերով, իսկ Մուրավսկու բատարէային հրամայեցի վերադառնալ պահեստի մէջ, իսկ 12-դ գնդին, 3-դ բատարէային և գնդաձիգներին յետ քաշվել 11-դ գնդի պաշտպանութեան տակ։ Վերջապահ մասերին դիրքերի վրա էր տանում իմ շտաբի գլխաւորը։ Ցերեկվայ ժամը 1-ին եապօնացիները շատ մօտ եկան 11-դ գնդի դիրքին, այնպէս որ 3-դ բատարէան չը կարողացաւ անցնել հանել ճանապարհին՝ հարուածվելով երկու կողմից կրակով, և, եապօնացիներին մօտիկ դիրք բռնելով, նոյն տեղում մնաց մինչև ճակատամարտի վերջը, կորցնելով հրամանատար փոխ-գնդապետ Մուրավսկուն։ Վերջապահ դիրքից բերվեց առաջինի համար գնդաձիգ վաշտ, որի հրամանատարը, տեսնելով փոխ-գնդապետ Մուրավսկու բատարէայի ծանր դրութիւնը, իր նախաձեռնութեամբ գրաւեց դիրքը, կորցնելով իր կազմի կէսը և բոլոր ձիերը և փորձ արեց քարշ տալ գնդաձիգները լեռներով մարդկանց ձեռքով, որոնք գնդակահարվում էին երկու կողմից թափված կրակով։ Գնդաձիգները արձակեցին մօտ 35,000 գնդակներ։ 12-դ գնդի մասերը անցան մէջտեղից և դուրս բերեցին դրօշակը։ 6-դ բրիգադայի 2-դ բատարէան, փորձ անելով անցնել դէպի պահեստի զօրքը ուրիշ ճանապարհով, չը կարողացաւ բարձրանալ լեռներով ձիերի կէս կազմով և, նորից դէպի դիրքը գնալով, աջակցեց 11-դ գնդի յարձակմանը։ 11-դ գունդը դիրքի վրա կարողացաւ մնալ էլի երկու ժամ և նշանաւոր կորուստներով սուիններով ճեղքեց թշնամու շարքերը և անցաւ բարձունքից, դրօշակը տանելով իր հետ։ Այս գործում սպանվեց 11-դ գնդի հրամանատար գնդապետ Լայմինգ։ Մեր կորուստներն են—մօտ 2000 զինուոր և մօտ 40 օֆիցէր։ Եապօնացիների կորուստները պէտք է որ ահագին լինեն։ Դիվիզիան յետ նահանջեց դէպի Ֆինխուանչէն կատարեալ կարգով։ Երրորդ դիվիզիայի մարդիկ հզօր են հոգով և աւելի քան 700 վիրաւոր՝ գնդերի հետ հասան Ֆինխուանչէն։

ՇԵՐԲՈՒՐԳ։ Շէրբուրգի ծովային պրէֆէկտը դատապարտեց 60 օրվայ բանտարկութեան մինիստրութեան գրագիր Մարտէնին ծառայութեան մէջ անզգոյշ լինելու համար, այն ժամանակ, երբ զինուորական-ծովային դատարանը մերժեց լրտեսութեան մէջ նրա դէմ սկսված մեղադրանքը։

ԲԵԼԳՐԱԴ։ Լրագրութեան տեղեկութիւններից դատելով, կառավարութիւնը վճռել է սերբիական թագաւոր Պետրոսի թագադրութեան ծէսը կատարել Ժիչեան վանքում յունիսի 2-ին, նրան թագաւոր ընտրելու տարեդարձին։

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ։ Պաշտօնական և մասնաւոր տեղեկութիւնների միջև եղած տարաձայնութեան առիթով հարցապնդումին պատասխանում եմ, որ ականատեսների հաղորդած տեղեկութիւնների համեմատ, ջրասոյզ եղան 10 բրանդէրներ, իսկ պաշտօնապէս հաղորդված է 8 բրանդէրների կորուստ։

ԿԻԵՎ։ Կայացաւ «Ռուսական ժողովի» Կիևում կազմակերպվող բաժանմունքի անդամների հիմնադիր ժողովը։ Քննվեց և ստորագրվեց կանոնադրութեան նախագիծը։ Գլխաւոր նպատակն է ռուս սլաւոնական ժողովրդական կեանքի ուսումնասիրութիւնը։

22 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ապրիլի 28-ին Պետերբուրգում լինելու է զօրքերի Բարձրագոյն զօրահանդէս։

ՄԻՆՍԿ։ Բոլորովին այրվեց Բօբրույսկի գաւառի Սվիսլօչ աւանը։ Հարկաւոր է անյապաղ օգնութիւն։

ՍԵՈՒԼ։ («Վօլֆի գործ.»)։ Ռուսները մեծ քանակութեամբ զօրքեր կենտրօնացրին Ֆինխուանչէնում, ուր մեծ կռիւ է սպասվում։

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ։ Ապրիլի 21-ին (Սեփական թղթակցից)։ Երեկոյեան 6 ժամին թշնամին երևում է հօրիզօնի այն կողմը։ Հնարաւոր է նոր յարձակումն։ Լրացուցիչ տեղեկութիւններով հաստատվել է, որ յարձակմանը մասնակցում էին 12 բրանդէրներ. 8-ի կորստեան տեղը ճիշտ որոշված է, երկու խորտակված նաւերի տեղը չէ որոշված, իսկ երկուսը, սպանիչ կրակին չը դիմանալով, յետ դարձան։ Ժողոված տեղեկութիւնների համեմատ, իւրաքանչիւր բրանդեր միջին չափով երկու հազար տոննից աւել ունէր։ Բրանդերները անուանվում էին «Սերատա», «Կօկուրա», «Ասագաօ», «Միկաւա», «Տոտօմի», «Ֆուղզան», «Եղօ», «Նագատօ», «Օտարու», «Սագամի», «Այկօկու», «Սակուրա» ունի 3000 տոնն։—Միչման Ջաեվ կազդուրվում է և վագը սանիտարական գնացքով ուղևորվում է Պետերբուրգ։

ԲԵՌԼԻՆ։ Եապօնական կառավարութիւնը գնեց «Հիւսիսային-Գերմանական Լլօյդից» արևելեան-ասիական գծի 8 շոգենաւեր պատերազմական պէտքերի համար։

ՆԻՒ-ԵՕՐԿ։ Պանամայից եկած հեռագրի համաձայն, Ջրանցքի ամերիկական յանձնաժողովը Ջրանցքի երկրի տիրապետութեան և պանամեան ընկերութեան ստացուածքների իրաւունքն իր ձեռքն առաւ։

Կ. ՊՕԼԻՍ։ Թիւրքական լրագիրների տեղեկութիւնների համաձայն, վիլայէթների եւրոպական իշխանութիւնները հրաման ստացան որքան հնարաւոր է դիւրացնել բուլգարական փախստականների վերադարձը։—«Կորրէսպօնդէնց Բիւրօն» հաստատում է, թէ իրաւ է դուրս եկել, որ բաւարարութիւն տրվի համաձայնութիւն կայացրած պետութիւնների դեսպանների արած ֆինանսական պահանջներին՝ մակեդօնական ժանդարմերիայի համար։ Օտարերկրեայ օֆիցէրների գալուստ երևալը անհանգստացրեց քրիստոնեայ ազգաբնակութեանը, այն ինչ բոլորովին չը վրդովեցրեց մուսուլման ազգաբնակութեանը, ինչպէս որ երկիւղ էր կրում Բ. Դուռը։ Թիւրքական երեք պաշտօնեաներ մեկնեցին Զմիւռնիա տեղի ունեցած միջնադէպը քննելու համար։ Յունական միսիան կրկնեց Բ. Դրան առաջ իր նոյն պահանջը բաւարարութիւն տալու մասին։ Թիւրքիայի արած առաջարկութիւնները մերժել է Յունաստանը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏԵՆԵՐԸ

ՉԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱԻՆՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ՔԱՔԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.
Պ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. Սօլօզօվ ատամնաբոյժ. 9—11 ժ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. ՌՈՍՏՕՄԲԷԿՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. մորթու և վեներական հ.
Գ. Ս. ԼԵՎԻ—6—7 ժ. նեարդային (էլէկտրաբուժութիւն), ներքին և վեներական հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՁԵՐԲԻՆԻՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ա. ԱԹՎԱՆԻՑԱԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ։

Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Ուրբաթ, 1904 թւի ապրիլի 30-ին, նշանակված է Թիֆլիսի ժողովարանի անդամների երկրորդ ընդհանուր ժողովը՝ քուէարկելու այն անձերին, որոնք առաջարկված են ժողովարանի անդամի թեկնածու և վճռելու մի քանի տնտեսական և ուրիշ հարցեր։ (ե. կ. ո.) 2—3

Լոյս տեսաւ
Հ. ԱԹՈՔԵԼԵԱՆԻ
ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ
երրորդ գիրքը
ՃԱՊՕՆԻԱ
կամ Ծագող արեգակի երկիր
հեղ. Շրէյդէրի.

Պատկերով և քարտէզով. գինն է 25 կօպէկ։

Դիմել գրավաճառներին, իսկ մեծ քանակութեան համար հրատարակչին։

ԻՄ ԳՈՐԾԵՐԸ ՎԵՐՋԱՑՆԵԼՈՒ առիթով
ներկայ ապրիլի 22-ից նշանակված է
ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՈՒՄՆ
գործարանականից էլ պակաս գներով իմ կահկարասիների խանութում, ԱԼԷՔՍԱՆԴՐԵԱՆ ԱՅԳՈՒ դիմացը, ԳԱՆՁԱՐԱՆԻՆ ԿԻՑ։
Գները նշանակված են, առանց սակարկութեան
Մեծ քանակութեամբ գնողներին խնդրում եմ դիմել անձամբ ինձ։
Յարգանօք—Բ. Գ. Բերիեվ.
(ա. օ.) 2—8

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինօվսկայա փ. № 16, տուն Եղիազարեանի։ 53—100

ՎԻԵՆՆԱ. ԲԺ. Պ. Մ. ԱՓՐԻԿԵԱՆ
Կազմում է խորհուրդներ տեղիս մասնագէտ-պրօֆէսօրների հետ Ռուսաստանից եկող հիւանդների համար։
հասցէն Wien, Spiegelgasse, 3, IV stock.
25—50

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը 9—11 ժ. առաւօտը և 5—7 ժ. երեկոյեան։
Վելիամինօվսկայա փողոց, տ. Սաֆարօվի, № 13. (չ. ու. կ.) 19—50

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներին, ամեն օր առաւօտեան 12—2, երեկոյեան 5—6։ Վեծ Վանքի փողոց, տուն Կուզանօվի, Բախչիևի դեղատան կից։

Իմ աշխատութեամբ լոյս են տեսել հետևեալ
ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ
Աշակերտաց համար

1. Դասատետր կրօնի	ա.	տարի	— 25
2. »	բ.	»	— 20
3. »	գ.	»	— 30
4. Հին-ուխտ	դ.	»	— 35
5. Նոր-ուխտ	ե.	»	— 40
6. Գործք առաքելոց	զ.	»	— 40

Ուսուցչաց համար

7. Ուղեցոյց կրօնի—հին-ուխտի (սպառ.)	—
8. » »—Նոր-ուխտի	2—50
9. Ուսումն քրիստոնէական կրօնի Դ. հ.	1—50
10. » » » Ե. »	— 50

Ինձ դիմողները ստանում են 1) 6 տարիների համար 25%. 2, 3, 4, 5 տարիների համար 20%, իսկ 7, 8, 9, 10 տարիների համար 35% զեղչ։

Կարելի է դիմել—1) ինձ (Коммерческое училище), 2) Центральная книжная торговля և 3) Книжный магазинъ «Гуттенбергъ».

Սահակ քահ. Սահակեանց
74—100

Լոյս տեսաւ պատկերազարդ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ
Ներկայ տարվայ առաջին (IX) գիրքը
Բովանդակութիւն.

Հին Հայոց իրաւունքը եւ նրա հետազօտելու մեթոդը. Խ. Սամուէլեանի.—Բօրչալուի գաւառ. բանաւոր գրականութիւն. Ե. Լալայեանի—Հայ աշուղներ. Գ. Լեւոնեանի.—Մամօ եւ Զինէ քրդական ժողովրդական վէպ. Նժդեհեանի։—Նախիջեւանի գաւառ ա. մասն՝ Գողթն. Ե. Լալայեանի. — Մատենախօսութիւն՝ Կարա-Մուրզայի։ Պատկերներ լուսատիպ և բնագրում։

Երկու՝ XI և XII՝ գրքերի բաժանորդագինն է 3 ր.։ Մի գիրքն արժէ 2 ր.։

Նախկին գրքերը վաճառվում են խմբագրատանը բաժանորդագրական գնով։

Դիմել՝ Ерванду Лалаянцъ. Тифлисъ, Семинарія Нерсесянъ, կամ Саперная 5. 2—3

Լոյս տեսաւ
Աւ. Ահարոնեանի
ԵՐԵԽԱՆԵՐԸ
պատկերը
Գինն է 2 կօպ.

Դիմել՝ Баку, І. Ярвелянъ, Русскій торгово-промыш. банкъ.

Նոյն տեղը կարելի է ստանալ նաև հետևեալ գրքոյկները՝ Վ. Փափազեանի—«Լուր-Դա-լուր» քրդական պօէման—3 կօպ., «Արաղայի դաշտում» զրոյցը—4 կօպ., «Թռչող խոզը» զրոյցը—3 կօպ., Սմբատ. Ինգմանի—«Անպոչ հորթը» պատմուածքը—2 կօպ., Մ. Մանուէլեանի—«Էսքիզներ» գրքոյկը—5 կօպ.։ 3—3

Լոյս տեսաւ
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Հատոր առաջին. 1865—1871.
Գինն է 1 ռուբլի.

Առաջին հատորի մէջ զետեղված են այն խոշոր ու մանր յօդուածները, որոնք լոյս են տեսել մինչև «Մշակ» լրագրի հրատարակութիւնը։ Այդ յօդուածները վերաբերում են 1865—1871 թուականների շրջանին և տպված են եղել մասամբ «Մեղու Հայաստանի» լրագրում, իսկ մասամբ «Հայկական Աշխարհ» ամսագրում։

1—10 Դիմել «Գուտտէնբէրգ» գրախանութը։

Լոյս տեսաւ
Թ. ԽՈՒՍԿԻՎԱՁԷԻ
«ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ»
(Էսկիզ)
վրաց. թարգմ.
Գինն է 3 կօպ.
Դիմել՝ Զաքարիա Գրիգորեանցի «Կովկասեան գրավաճառանոց»։

✿ ՄԵԶ ՄՕՏ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ✿

«Դաւիթ Բէկ» Րաֆֆի I II III գիրք գ.	3 ր. 50 կ.
«Սամուէլ» » » »	3 ր. 50 կ.
«Ոսկի աքաղաղ» » »	1 ր. — —
«Զահրումար» » » »	2 ր. — —
«Տաճկահայք» » » »	— — 50 կ.
«Խենթը» Ահարոնեանի (և միւս աշ.)	1 ր. — —
«Հացի խնդիրը» Պ. Պռօշեանի գինն է	1 ր. 30 կ.
«Սօս եւ Վարդիթեր» » »	1 ր. 20 կ.
«Ընտիր Հայկազունք» պատկերազարդ.	2 ր. 50 կ.
«Տնային բժշկարան» I և II հատոր.	2 ր. 60 կ.
«Սոխակ Հայաստանի» . .	1 ր. 20 կ.
«Շիլլէր» պատկեր. Ս. Թառայեանի.	2 ր. — —
«Լծի տակ» Ի. Վազօվի. .	— — 80 կ.

Նաև «ազգային գործիչների» շատ տեսակ պօստ կարտեր, որոնք պատրաստված են արտասահմանում (Իտալիայից), տ. Սիրանոյշը զանազան դերերում, «Էմիլ Դիլօն», «Հայ դիւցազնուհիք» և այլն և այլն հատը 5 կ., 100 հատը 3 ր. 50 կ., 1000 հատը 30 ր. և այլն, հայերէն զանազան գրքեր և պատկերներ։

Դիմել՝ Баку Оганнесу Газанчіану. 2—3

ՎԵՐՋԻՆ
ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ
երկու հատոր
Գինն է 1 ր. 50 կ.
Դիմել Թիֆլիս. Ա. Քալանթարին, կամ «Գուտտէնբէրգ» գրավաճառանոցին։

Յովհաննէս Արամեանցի հրատարակութեամբ լոյս են տեսել հետեւեալ պատկերազարդ հրատարակութիւնները.

1. Բեօրնսօն՝ կազմեց Ե. Թոփչեան	10 կ.
2. Մահմեդ՝ » » »	7 »
3. Մեսրոպ Մաշտոց՝ կազմեց Ե. Թ.	5 »
4. Սահակ Պարթև՝ » »	5 »
5. Հաուպտման՝ » »	15 »
6. Մեծն Ներսէս՝ » »	10 »
7. Զրադաշտ, կազմեց Մ. Թամամշեան	7 »
8. Ընտրութիւն կաթնատուների կամ կաթնատու կովերը ճանաչելու միջոցները, 26 պատկերով Գ. Մեծատուրեանի	15 »

Շուտով լոյս է տեսնելու 1. Պուշկին, 2. Վիրխով.

Պատրաստ է տպագրութեան համար՝ Ալ. Քալանթար.—Հանրամատչելի ձեռնարկ կաթնատնտեսութեան։

Պատրաստվում են նոր հրատարակութիւններ։

Դիմել՝ Тифлисъ: Книжный магазинъ „Гуттенбергъ“, 3—3

Վաճառվում են

1. 26 տղամ. և 1 աղջիկ, Մ. Գօրկու	5 կ.
2. Դանկօի սիրտը, . . նոյնի	3 »
3. Իմ ուղեկիցը . . նոյնի	10 »
4. Արտիստը, Շիրվանզադէի	15 »
5. Եղօյի քոռ բախտը, Շահրիարի	3 »
6. Եապօնիա, Խ. Խաչատրեանի	3 »
7. Սպիտակ ծաղիկ, Էլ. Օժէշկօի	5 »
8. Կնոջ վրէժը, Կ. Մենդեսի	3 »
9. Որոմն ցանողներ, կոմ. 3 գործ. Վ. Տիրացեանի	30 »

Գումարով գնողներին 30% զեղչ. (քիչ ցանկացողները կարող են ուղարկել մարկաներ)։ Ճանապարհածախսը իրանց վրա։ Ուղարկում եմ նաև վերադիր վճարով։

Դիմել՝ կանխավճարով Тифлисъ. (Пушкинскій пассажъ) Гев. Бабурянцу. 3—3

„ԾՂԹԱՅ"

Նաւթարդիւնաբերական ընկերութեան վարչութիւնը հրաւիրում է պ.պ. բաժնատէրերին տարեկան ընդհանուր ժողովի, որ տեղի է ունենալու ուրբաթ, ներկայ ապրիլի 23-ին, երեկոյեան 7 ժամին, քաղաքային տան դահլիճում։

Զբաղմունքի առարկաներն են.

1) Վերաքննիչ յանձնաժողովի երեք անդամների և նրանց երկու թեկնածուների ընտրութիւնը։
2) Վարչութեան անդամ Ն. Ա. Ալիխանեանի Թիֆլիսից մեկնելու հարցը։
3) Վարչութեան անդամներին 1904 թւից սկսած վարձատրելու հարցը։

Որոշված թւով բաժնատէրեր չեկած դէպքում, երկրորդ անգամ ժողովը կը կայանայ նոյն տեղում կիրակի օրը, ապրիլի 25-ին, առաւօտեան ժամը 10-ին և օրինաւոր կը համարվի, որքան էլ որ բաժնատէրեր ներկայ լինեն։ (հ. չ. ո.) 3—3



Ս. Պետերբուրգի ռեզինայական արդիւնագործութեան ընկերութեան
ԱՄՈՒՐ, ՃԱՇԱԿՈՎ և ԹԵԹԵՒ, ԿԱՆԱՆՑ, ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ և ԵՐԵԽԱՆԵՐԻ
ԿՕՇԻԿՆԵՐ,
նոյնպէս և սկօրօխօդներ ու սանդալներ կարելի է ստանալ Թիֆլիսում և Անդրկովկասի միւս քաղաքներում ԱՄԵՆԱԼԱՒ վաճառատներում։

Խնդրվում է ուշք դարձնել ֆաբրիկայի նշանի վրա։

„ԼԷՕՊՕԼԴ ՆԷՅՏԷԼԼԵՐ"
Առեւտրական տան պահեստում կայ ընտրութեան համար մեծ քանակութեամբ ռուսական եւ արտասահմանեան արդիւնագործութեան
ԿԱՃՈՒԵՂԷՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ
Տէլէֆօն № 346. 1—100 Երևանեան հրապարակի վրա։

Дозволено Цензурою. Тифлисъ, 22-го апрѣля 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 81.